Արձանագրություն N 4
ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի

ք. Երևան 03/09/2024թ.
ժ. 12:00

Հրավեր-ծանուցմամբ սահմանված ժամկետում «ՔԵՑ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը թղթային եղանակով ներկայացրել է համապատասխան հայտը: Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «ՔԵՑ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված 1-ում "մեկ չափաբաժնին" փոխարեն նշվել է "բոլոր չափաբաժիններին",
2. «ՔԵՑ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանող և պահանջվող առնվազն երկու համանման՝ պետական ֆինանսների կառավարման ավտոմատացման նախագծերի մանրամասն նկարագրությունները թերի են,
3. *Մեթոդաբանություն -> Առաջադրանք 1 -> Իրագործում կետ Ա -> 4-րդ ենթակետ:*
«Խորհրդատուի կողմից ԿՖԿՏՀ տեխնիկական պարամետրերի և տեխնիկական նկարագրերի ամբողջականության և ճշտության ստուգում չի իրականացվելու»:
<u>Հարց</u>:Խնդրում ենք KPMG-ին ավելի մանրամասն նկարագրել, թե հատկապես ինչն է լինելու նրանց աշխատանքի մաս չկազմող, և ավելի մանրամասն նկարագրել այն տեխնիկական պարամետրեր, որոնց մասին նրանք խոսում են տվյալ կետում:
Մեթոդաբանություն -> Առաջադրանք 2 -> Իրագործում Ա -> 1-ին ենթակետ:
«Այլ տեխնիկական պարամետրեր, ներառյալ համակարգի կառուցվածքը, մոդուլների կառուցվածքը և դրանց համար նախատեսված տեխնիկական պահանջները, չեն ներառվում մեր աշխատանքի մեջ»:
<u>Հարց</u>: Խնդրում ենք KPMG-ին ավելի մանրամասն նկարագրել, թե հատկապես ինչն է լինելու նրանց աշխատանքի մաս չկազմող, կամ ավելի պարզ նկարագրել, թե ինչն է լինելու նրանց պատասխանատվության մաս:
KPMG-ն առաջարկել է բաժանել Առաջադրանք 3-ը երկու փուլերի, և ներկայացրել իրենց տեսակետը, որը ներառված է 3.1 կետում:
Մեր կարծիքով այս փուլը չի համընկնում նախաորակավորման կանոններին:

Մասնագիտական խումբը որոշեց.

1. Կասեցնել մասնագիտական խմբի նիստը և ծանուցել«ՔԵՑ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները՝ ներկայացնելով ճիշտ լրացված հավելված 1-ը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

2. ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի մասնագիտական խմբի նիստ հրավիրել ս/թ սեպտեմբերի 5-ին ժամը 15:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Մասնագիտական խմբի ղեկավար՝ _____ Ա. Մուրադյան

Մասնագիտական խմբի անդամներ՝ _____ Ա. Գևորգյան

_____ Ս.Շահնազարյան

_____ Ժ.Տիտիզյան

_____ Կ. Ալավերդյան

_____ Վ. Պողոսյան

_____ Ս.Խանվելյան

_____ Ա.Ավետիսյան

_____ Ս. Պատուրյան

_____ Ռ. Սպատառու

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
Խորհրդատվական բաժնի տնօրեն _____ Զ. Ֆուրունջյան

Գնումները համակարգող՝ _____ Լ. Սահակյան